ՍԹԱՓ ԳՆԱՀԱՏԵՔ ՁԵՐ ՈՒԺԵՐԸ. ԽԵԼԱՄԻՏ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

(ութերորդ ռազմավարություն)

Մեզանից յուրաքանչյուրն ունի իր սահմանները: Մարդու ուժն ու կարողությունները անսահման չեն: Հիշե՛ք. վտանգը կայանում է մեր հնարավորություններից այն կողմ անցնելու ցանկության մեջ: Կուրացած պարգևի սպասումով, որի համար մենք պետք է մեր ամբողջ ուժը ներդնենք, մենք հաճախ մնում ենք կոտրված տաշտակի առջև՝ հյուծված, անպաշտպան: Դուք պետք է իմանաք ձեր հնարավորությունները և ուշադիր հաշվարկեք ձեր ուժը: Գնահատեք պատերազմում կրած կորուստները՝ կորցրած ժամանակը, վտանգված հեղինակությունը, վրեժխնդրության պատրաստ կատաղի հակառակորդին: Երբեմն ավելի լավ է սպասել, լուռ մոտենալ հակառակորդին, քան բացահայտորեն ճակատային հարված հասցնել: Եթե մարտը անխուսափելի է, պարտադրեք ձեր մարտական պայմանները: Հարվածեք նրա թույլ կետերին: Պատերազմը թանկ դարձրեք նրա համար, բայց էժան՝ ձեզ համար: Տնտեսապես պայքարելով կկարողանաք դիմակայել նույնիսկ ամենավտանգավոր հակառակորդին:

ՊԱՐՈՒՅՐԻ ԷՖԵԿՏ

Մ.թ. ա. 281 թվականին պատերազմ սկսվեց Հռոմի և Տարենտի միջև, որը գտնվում էր Իտալիայի արևելյան ափին: Տարենտը ժամանակին հիմնադրվել էր որպես հունական Սպարտայի գաղութ: Քաղաքաբնակները խոսում էին հունարեն և իրենց համարում էին քաղաքակիրթ սպարտացիներ, իսկ Իտալիայի մյուս քաղաքները համարվում էին բարբարոս: Ինչ վերաբերում է Հռոմին, ապա այդ օրերին նա ամրապնդում էր իր դիրքերը՝ շարունակական պատերազմներ վարելով մոտակա քաղաքների դեմ:

Զգուշավոր հռոմեացիները չէին պատրաստվում հակադրվել Տարենտին: Այն ժամանակ դա Իտալիայի ամենահարուստ քաղաքն էր, որին ոչինչ չարժեր Հռոմի դեմ պատերազմում դաշնակիցներ գտնել: Բացի այդ, այն գտնվում էր բավականին հեռու հարավ-արևելքում և անմիջական վտանգ չէր ներկայացնում: Սակայն Տարենտի բնակիչները, երբ խորտակեցին նավահանգստին մոտեցող մի քանի հռոմեական նավեր, սպանեցին նավատորմի հրամանատարին, և երբ հռոմեացիները փորձեցին ինչ-որ կերպ պայմանավորվել նրանց հետ, բայց դեսպանները խայտառակությամբ վտարվեցին, Հռոմի պատիվը ոտնահարվեց, և պատերազմ սկսելու որոշումն այլևս երկմտանք չառաջացրեց:

Չնայած իր հարստությանը, Տարենտ քաղաքը իրական բանակ չուներ: Քաղաքի բնակիչները սովոր էին հեշտ և անհոգ կյանքով ապրելուն: Նրանք չգիտեին, թե ինչպես է պետք պատերազմել, ուստի որոշեցին աջակցություն խնդրել հույներից: Սպարտացիները, սակայն, զբաղված էին ինչ-որ այլ արշավով: Ստիպված էին օգնություն խնդրել Էպիրոսի թագավոր Պիրրոսից (մ.թ.ա. 319-273)՝ Ալեքսանդր Մակեդոնացուց հետո հույն մեծագույն հրամանատարից:

Էպիրոսը փոքր թագավորություն էր կենտրոնական Հունաստանի արևմուտքում: Աղքատ, նոսր բնակեցված հողեր, սակավ ռեսուրսներ: Այնուամենայնիվ, Պիրրոսը, ով դաստիարակվել էր Աքիլլեսի սխրանքների մասին պատմություններով, ումից, ըստ լեգենդի, ծագել էր նրա ընտանիքը, ինչպես նաև Ալեքսանդր Մակեդոնացու հեռավոր ազգականն էր, վճռական էր շարժվել փառավորված նախնիների հետքերով և թագավորությունը հզոր կայսրության վերածելուն: Իր երիտասարդության տարիներին նա ծառայել էր այլ փառահեղ զորավարների բանակներում, ներառյալ Պտղոմեոսը, որն Եգիպտոսի տիրակալն էր: Պիրրոսը շուտով ձեռք բերեց քաջարի մարտիկի համբավ: Նա հայտնի էր մարտում ամենավտանգավոր վայրերը նետվելու սովորույթով, ինչի համար բանակում վաստակել էր համընդհանուր հարգանք: Վերադառնալով Էպիրոս՝ նա ձևավորեց փոքր, բայց գերազանց պատրաստված բանակ, որը մեկ անգամ չէ, որ հաղթանակներ էր տոնել գերակշիռ ուժերի նկատմամբ, օրինակ՝ մակեդոնացիների նկատմամբ: Այո, Պիրրոսը փառահեղ հեղինակություն ուներ, բայց իր փոքր երկրի համար հեշտ չէր հասնել ավելի հզոր հարևանների՝ մակեդոնացիների, սպարտացիների, աթենացիների ճանաչմանը: Հետևաբար, Տարենտի առաջարկը գայթակղիչ էր թվում. նախ, նրան խոստանում էին լավ վարձատրություն և դաշնակից զինվորների լիարժեք կազմ, երկրորդ՝ հռոմեացիներին հաղթելով նա կդառնար լավագույնը Իտալիայում, այնտեղից կբացվեր ճանապարհ դեպի Սիցիլիա, որտեղից էլ դեպի Կարթագեն՝ Հյուսիսային Աֆրիկա: Ալեքսանդր Մակեդոնացին, ստեղծելով իր կայսրությունը, առաջ էր շարժվում դեպի արևելք, իսկ Պիրրոսը որոշեց, որ առաջ կշարժվի դեպի արևմուտք և կհասնի իշխանության ամբողջ Միջերկրական ծովում: Նա ընդունեց առաջարկը:

Մ.թ.ա. 280 թվականի գարնանը Պիրրոսը նավարկեց՝ գլխավորելով Իտալիա ներխուժած ամենամեծ հունական բանակը՝ 20,000 հետևակ, 3,000 հեծելազոր, 2,000 նետաձիգ և 20 մարտական փիղ: Սակայն Տարենտ հասնելով՝ նա հասկացավ, որ իրեն խաբել են: Քաղաքը ոչ միայն սեփական բանակ չուներ, այլև ոչ մի փորձ չէր արել այն կազմավորելու ուղղությամբ և Պիրրոսը ստիպված էր ամեն ինչ անել ինքնուրույն: Նա ժամանակ չկորցրեց: Հայտարարելով ռազմական դիկտատուրա, անմիջապես անցավ Տարենտի բնակիչներից բանակի կազմավորմանը:

Պիրրոսի ժամանումը անհանգստացրեց հռոմեացիներին, ովքեր լավ գիտակցում էին նրա անբասիր համբավը որպես ռազմավարի և զինվորի: Որոշվեց նրան ժամանակ չտալ նախապատրաստվելու համար: Հռոմեացիները անմիջապես իրենց զորքերը ուղարկեցին Տարենտ՝ ստիպելով Պիրրոսին մարտի մեջ մտնել իր այդ ժամանակ ունեցած ուժերով: Երկու բանակները հանդիպեցին Հերակլեա քաղաքի մոտ: Հռոմեական զորքերը, որոնք թվաքանակով գերազանցում էին Պիրրոսի բանակին, պարտության եզրին էին, երբ տաղանդավոր զորավարը անսպասելիորեն խաղրկեց իր հաղթաթուղթը՝ փղերի հարձակումը: Հսկայական, զանգվածային այս կենդանիները, բարձր և սարսափելի շեփորահարում էին, իսկ նրանց մեջքին գտնվող նետաձիգները նետերի տեղատարափ հոսքեր էին արձակում հակառակորդի ուղղությաբ: Հռոմեացիները երբեք չէին հանդիպել մարտական փղերի և նրանց շարքերում խուճապ սկսվեց՝ մարտի ընթացքը փոխվեց: Հռոմեական լեգեոնները տատանվեցին և սկսեցին նահանջել:

Պիրրոսը մեծ հաղթանակ տարավ: Նրա փառքը տարածվեց ամբողջ թերակղզում: Նույնիսկ սկսեցին խոսել, որ Ալեքսանդր Մեծի ոգին է մարմնավորվել նրա մեջ: Այլ քաղաքները այժմ պատրաստակամորեն սկսեցին բանակը համալրել՝ ցանկանալով փոխհատուցել Հերակլեա քաղաքի մոտ կրած կորուստները: Այնուամենայնիվ, Պիրրոսը լրջորեն անհանգստացած էր: Մարտում նա կորցրել էր բազմաթիվ վետերանների՝ փորձված և քաջարի մարտիկների, այդ թվում՝ առանցքային զորձիչների: Սակայն ավելի կարևոր էր հռոմեական լեգեոնների ուժն ու կարգապահությունը: Նրանք մեծ ազդեցություն էին թողել Պիրրոսի հոգում, և չէին կարող համեմատվել նախորդ հակառակորդներից և ոչ մեկը հետ:

Պիրոսը որոշեց փորձել հաշտության համաձայնություն ձեռք բերել հռոմեացիների հետ՝ առաջարկելով կիսել թերակղզին: Միևնույն ժամանակ, նա սկսեց արշավ դեպի Հռոմ՝ ազդելու բանակցությունների ընթացքի վրա՝ արագացնելով դրանք և ցույց տալով, որ եթե հռոմեացիները հրաժարվեն խաղաղության համաձայնագրից, նա պատրաստ է շարունակելու պատերազմը:

Ինչ վերաբերում է հռոմեացիներին, ապա Հերակլեա քաղաքի մոտ կրած պարտությունը նրանց վրա մեծ տպավորություն թողեց: Սակայն հռոմեացի լեգեոներներին շփոթության մեջ գցելն այնքան էլ հեշտ չէր, հազվադեպ էր պատահում, որ նրանք այդքան հեշտությամբ հանձնվեին: Ճակատամարտից անմիջապես հետո հայտարարվեց նոր զորակոչ, և երիտասարդները խանդավառությամբ արձագանքեցին դրան: Հռոմեացիները հպարտորեն մերժեցին խաղաղության առաջարկը: Նրանք երբեք չեն կիսելու Իտալիան որևէ մեկի հետ:

Երկու բանակները կրկին հանդիպեցին Աուսկուլում քաղաքի մոտ՝ Հռոմից ոչ հեռու: Դա տեղի ունեցավ մ.թ.ա. 279 թվականի գարնանը: Այս անգամ ուժերը հավասար էին: Առաջին օրը կատաղի պայքար տեղի ունեցավ, և նորից հռոմեացիները կարծես մոտ էին հաղթանակ տոնելուն: Բայց երկրորդ օրը հմուտ ստրատեգ Պիրրոսը կարողացավ հռոմեական լեգեոններին ներքաշել մի տեղանք, որն ավելի շատ համապատասխանում էր մարտական գործողությունների իր ոճին, և որի շնորհիվ առավելություն ձեռք բերվեց: Երբ օրն արդեն մոտենում էր ավարտին, Պիրրոսն, մարտական փղերի աջակցությաբ, անձամբ ղեկավարեց հարձակումը: Հռոմեացիները շտապեցին ցրվել, և կրկին Պիրոսը հաղթանակ տոնեց:

Այժմ Պիրրոսը, կարծես, բարձրացավ բարձունքների, բայց ինքը միայն մելամաղձություն էր զգում: Նրան տանջում էր մի վատ զգացում: Նրա բանակի կրած կորուստները սարսափելի էին: Փորձառու զորավարների շարքերը նոսրացել էին, իսկ ինքը՝ ծանր վիրավորվել: Միևնույն ժամանակ, հռոմեացիները անխոնջ էին, իսկ նրանց ուժերը՝ անսպառ: Երբ Պիրրոսին շնորհավորեցին Աուսկուլում տարած հաղթանակի կապակցությամբ, նա պատասխանեց. «Եվս մեկ նման հաղթանակ, և ես կվերադառնամ Էպիրոս առանց զինվորների»:

Պիրոսը, սակայն, արդեն պարտություն էր կրել: Աուսկուլում նրա կորուստներն այնքան նշանակալի էին, որ խոսք չկար դրանց արագ համալրման մասին, իսկ մնացած մարտիկների թվաքանակն այնքան քիչ էր, որ հռոմեացիների վրա հարձակվելը անիմաստ էր: Իտալիայում արշավն ավարտվեց լիակատար փլուզմամբ:

Մեկնաբանում

Պիրրոս թագավորի պատմությունը և Աուսկուլումի ճակատամարտից հետո նրա հայտնի հայտարարությունը ծնունդ տվեց «պիրրոսյան հաղթանակ» արտահայտությանը, որը նշանակում էր հաղթանակ, որը ձեռք էր բերվել չափազանց մեծ գնով և, հետևաբար, վերածվել էր պարտության: Հաղթող կողմը չափազանց ուժասպառ էր իր նվաճումները խարսխելու համար, չափազանց խոցելի էր հաջորդ ճակատամարտի մասին մտածելու համար: Եվ իսկապես, Աուսկուլումի «հաղթանակից» հետո Պիրրոսին սկսեցին հետապնդել անհաջողությունները, նրա բանակը ժամանակ չուներ վերականգնելու ուժերը, և միևնույն ժամանակ թշնամու հզորությունը գնալով մեծանում էր: Ամեն ինչ ավարտվեց մարտում նրա անժամանակ մահով՝ վերջ դնելով Էպիրոսի տիրապետության անհիմն երազանքներին:

Պիրրոսը կարող էր խուսափել անկումից, այն պարույրից, որը նրան տանում էր դեպի պարտություն: Հետախուզությունը նրան նախապես տեղեկացրել էր հռոմեացիների աճող հզորության, Տարենտի անկումային տրամադրության և դավաճանության մասին: Այս ամենը իմանալով՝ նա կարող էր կամ ավելի շատ ժամանակ հատկացնել սեփական բանակը կազմակերպելուն, կամ ընդհանրապես հրաժարվել արշավանքից: Տարենտում, պարզելով, որ իրեն խաբել են, նա դեռ կարող էր չեղարկել համաձայնագիրը և հետ դառնալ: Նույնիսկ Հերակլեայից հետո դեռ ուշ չէր: Կարելի էր որոշել նահանջել, ուժ հավաքել կամ պարզապես հեռանալ որպես հաղթող: Եթե Պիրրոսը ընտրեր այս տարբերակներից մեկը, նրա պատմությունը կարող էր բոլորովին այլ ընթացք ու ավարտ ունենալ: Բայց նա չէր կարող կանգ առնել: Այս հաղթանակը, նրա կյանքի երազանքն էր և չափազանց գայթակղիչ էր: Ի՞նչ գնով էր այն նվաճվելու: Դա կարևոր չէր: Կորուստները կարելի էր հետագայում փոխհատուցել: Եվս մեկ մարտ, ևս մեկ հաղթանակ, և գործն արված էր:

Պիրրոսյան հաղթանակները մեր կյանքում տեղի են ունենում ավելի հաճախ, քան դուք կարող եք պատկերացնել: Անխուսափելի հաջողության ոգևորությունն այնքան բնական է, նպատակը թվում է այնքան մոտ, այնքան գրավիչ: Մենք չենք տեսնում իրերի իրական վիճակը, այլ անգիտակցաբար նկարում ենք այն, ինչ ուզում ենք տեսնել՝ չափազանցնելով շահույթը և փակելով աչքերը հնարավոր դժվարությունների վրա: Որքան հեռու ենք գնում, այնքան ավելի դժվար է դառնում հետ քաշվելը և իրավիճակը հասկանալը, այն ռացիոնալ վերլուծության ենթարկելը:

Այսպիսի իրավիճակներում մտածկոտության արժեքը ոչ միայն չի աճում, այլև դուրս է գալիս վերահսկողությունից: Եթե ամեն ինչ վատ է ընթանում, մենք ուժասպառ ենք լինում, և դա մեզ ստիպում է ավելի ու ավելի շատ սխալներ թույլ տալ, ինչը հանգեցնում է նոր, անկանխատեսելի խնդիրների, որոնք ենթադրում են ավելի ու ավելի շատ ծախսեր և զոհողություններ: Ճանապարհին ցանկացած միջանկյալ հաջողություն և նվաճում բացարձակապես անիմաստ է և ոչ մի նշանակություն չունի:

Անհրաժեշտ է հասկանալ, որքան ավելի գայթակղիչ է թվում ձեր պարգևը, այնքան ավելի շատ ժամանակ պետք է ծախսեք նախապատրաստության վրա՝ մանրակրկիտ ուսումնասիրելով, թե ինչ գնով այն կարող է ձեռքբերվել: Հաշվարկեք բոլոր սպասվող ծախսերն ու սպառումները, բայց անպայման մտածեք անսպասելիի մասին: Դուք պետք է ամեն ինչ կանխատեսեք, որ պատերազմի ժամանակ ձեր ոգևորությունը կարող է նվազել, որ հաղթանակը կարող է դառնացնել և զայրացնել հակառակորդին: Դուք պետք է հստակ պատկերացում ունենաք, թե որքան կարող է տևել գործողությունը, մի մոռացեք, թե ինչպես եք վճարելու ձեր դաշնակիցներին և վարձկաններին: Երբեմն ավելի իմաստուն է սպասել՝ ունենալով հստակ պատկերացում այն մասին, թե ինչ հնարավորություններ ունեք, ընտրեք այն, ինչ հիմա ձեր ուժերի սահմաններում է: Հիշե՛ք. պատմությունը լի է այն մարդկանց դիակներով, ովքեր չեն անհանգստացել հաշվարկել ծախսերը: Խնայեք ինքներդ ձեզ, մի՛ մտեք այնպիսի մարտերի մեջ, որոնք անհրաժեշտ չեն, և դուք կմնաք կենդանի՝ մի գեղեցիկ օր հաղթելու համար:

ՈՒԺ ԵՎ ԹՈՒԼՈՒԹՅՈՒՆ

Երբ Եղիսաբեթ I թագուհին (1533–1603) 1558 թվականին գահ բարձրացավ, նա ժառանգեց ոչ այնքան կատարյալ որակի իշխանություն: Երկիրը քայքայված էր քաղաքացիական պատերազմով, իսկ ֆինանսական գործերը լիակատար քաոսի մեջ էին: Թագուհին երազում էր որոշ չափով երկարատև խաղաղության ժամանակաշրջան հաստատելու հնարավորության մասին, այդ դեպքում հնարավոր կլիներ փորձել վերականգնել Անգլիայի ոտնահարված հիմքերը և բարելավել տնտեսական վիճակը: Վերջինս հատկապես կարևոր էր. փող ունեցող կառավարիչը հնարավորություններ ունեցող կառավարիչ է: Անգլիան՝ սահմանափակ բնական պաշարներով փոքրիկ կղզի էր, նույնիսկ չէր կարող հույս ունենալ պատերազմելով հաղթել Ֆրանսիային և Իսպանիային՝ Եվրոպայի, այդ ժամանակվա, ամենահզոր պետություններին: Անհրաժեշտ էր ոչ թե պատերազմելով, այլ տնտեսական կայունությամբ ամրապնդել երկիրը:

Քսան տարի Եղիսաբեթը դանդաղ, տարեցտարի, շարժվում էր դեպի իր նպատակը: 1570-ականների վերջին նրա իրավիճակը կտրուկ վատթարացավ: Իսպանիայի հետ անխուսափելի թվացող պատերազմը սպառնում էր խափանել բոլոր ծրագրերը, չեղյալ համարել այն, ինչ արվել էր երկու տասնամյակի ընթացքում:

Իսպանիայի թագավոր Ֆիլիպ II-ը, որը եռանդուն կաթոլիկ էր, իր պարտականությունն էր ու անձնական առաքելությունն համարում էր կանխել բողոքականության տարածումը: Նիդեռլանդները (այժմ՝ Հոլանդիան և Բելգիան) այդ ժամանակ պատկանում էին Իսպանիային, բայց նահանգի կառավարումը բարդանում էր անդադար անկարգություններով և բողոքական ապստամբություններով: Ֆիլիպը, հայտարարելով ապստամբների դեմ արշավանք, վճռականորեն տրամադրված էր վերջ դնել նրանց: Մինչդեռ նրա ամենաթեժ երազանքը, որը նա վաղուց փայփայում էր, կաթոլիկության վերականգնումն էր Անգլիայում: Թագավորի անմիջական ծրագրերում էր Եղիսաբեթ I-ի դեմ դավադրությունը՝ նրան սպանելու նպատակով: Դրանից հետո Ֆիլիպը պատրաստվում էր գահ բարձրացնել կաթոլիկի՝ Եղիսաբեթի ազգականին՝ Շոտլանդիայի թագուհի Մերիին: Եթե այս ծրագիրը ձախողվեր, Ֆիլիպը պլանավորում էր կառուցել անպարտելի նավատորմիղ և օգտագործել Անգլիայի դեմ՝ նվաճելով այն:

Սակայն թագավորը չկարողացավ լիովին գաղտնի պահել իր ծրագրերը, և Եղիսաբեթի խորհրդականների համար ակնհայտ դարձավ, որ պատերազմը անխուսափելի է: Նրանք խորհուրդ տվեցին թագուհուն բանակը զինել Նիդեռլանդներում, որպեսզի ստիպեն Ֆիլիպին այնտեղ ռազմական ուժեր ուղարկել՝ կանխելով նրա հարձակումը Անգլիայի վրա: Սակայն թագուհին մերժեց խորհրդականների առաջարկը. նա համաձայնեց փոքր ջոկատներ ուղարկել Նիդեռլանդներ՝ բողոքական ապստամբներին օգնելու համար, բայց ոչ ավելին: Եղիսաբեթը սարսափում էր պատերազմից: Միայն բանակ պահելու արժեքը հսկայական էր, չհաշված այլ, թաքնված ծախսերի և ծախքերի զանգվածը: Այս ամենը սպառնում էր երկրի կայունությանը, մինչդեռ նա այդքան ջանքեր էր գործադրել դրան հասնելու համար: Եթե Իսպանիայի հետ պատերազմն իսկապես անխուսափելի էր, Եղիսաբեթը նախընտրում էր այն մղել իրեն հարմար ձևով: Թգուհին ցանկանում էր պատերազմ, որը կքայքայեր Իսպանիայի ֆինանսները, բայց միևնույն ժամանակ կապահովեր Անգլիան:

Ուշադրություն չդարձնելով խորհրդականների կոչերին՝ Եղիսաբեթը ամեն քայլի դիմում էր, որպեսզի Իսպանիայի հետ խաղաղությունը պահպանվի՝ հրաժարվելով թագավորին հրահրելու գաղափարից: Դա թույլ տվեց թագուհուն ժամանակ շահել և սկսել անգլիական նավատորմի կառուցումը: Միևնույն ժամանակ, նա գաղտնի աշխատանք էր տանում իսպանական տնտեսությունը խարխլելու ուղղությամբ, որը նա համարում էր հզոր տերության միակ խոցելի տեղը՝ նրա աքիլեսյան գարշապարը: Նոր Աշխարհի հսկայական, ընդարձակվող կայսրությունը, իհարկե, Իսպանիային հզոր էր դարձնում, բայց մյուս կողմից, այս կայսրությունը չափազանց հեռու էր: Դրանից եկամուտ ստանալու համար Ֆիլիպը ստիպված էր անընդհատ ներդրումներ կատարել նավատորմի զարգացման մեջ, որի համար հարկադրված էր հսկայական գումարներ փոխառել իտալացի բանկիրներից: Ֆիլիպի վարկը իտալական բանկերում ամբողջովին կախված էր նրանից, թե որքան անվտանգ կկարողանային նավարկել իսպանական նավերը՝ Նոր Աշխարհից ոսկի հասցնելով Եվրոպա: Այսդիսով, Իսպանիայի ուժն ու հզորությունը անկայուն էին:

Հաշվի առնելով այս հանգամանքը, Եղիսաբեթ I-ը իր մոտ հրավիրեց ժամանակի լավագույն նավաստուն՝ սըր Ֆրենսիս Դրեյքին, և հրամայեց նրան հարձակվել իսպանական գանձեր տեղափոխող նավերի վրա: Հարցը պետք է գաղտնի պահվեր, ոչ ոք չպետք է իմանար կապիտանի և թագուհու միջև կապի մասին: Պետք էր այնպես թվալ, կարծես նա զբաղված էր ծովահենությամբ՝ իր սեփական օգտի համար: Դրեյքին

հաջողվեց գրավել և թալանել յուրաքանչյուր նավ, որի համար իտալական բանկերում Ֆիլիպի համար տոկոսադրույքը բարձրացավ: Սակայն բանկիրները տոկոսադրույքը բարձրացնում էին ավելի շատ այն պատճառով, որ Դրեյքը սպառնում էր իսպանական նավերին, քան իրական կորուստների պատճառով: 1582 թվականին Ֆիլիպ II-ը ստիպված էր կասեցնել Անգլիա ուղարկվող «նավատորմիղի» կառուցումը՝ բավարար գումար չունենալու պատճառով: Հետևաբար, Եղիսաբեթը ժամանակ շահեց:

Մինչդեռ, թագավորի ֆինանսական խորհրդականների մեծ ափսոսանքին, Ֆիլիպը կտրականապես հրաժարվեց կրճատել նախատեսված նավատորմիղի քանակը: Թող շինարարությունը շատ ավելի երկար տևեր, թող ձգձգվեր, դա մեծ բան չէր: Այն պարզապես ավելի շատ գումար կխլեր: Թագավորը Անգլիայի դեմ պատերազմը համարում էր անձնական խաչակրաց արշավանք հավատքի համար և չէր պատրաստվում հրաժարվել դրանից որոշ առօրյա գործերի պատճառով: Եղիսաբեթը ոչ միայն զբաղված էր Իսպանիայի տնտեսական դիրքերի խաթարմամբ, այլև իր սուղ բյուջեի զգալի մասը ներդնում էր հետախուզական և լրտեսական ցանցի զարգացման մեջ: Առանց չափազանցության կարելի է ասել, որ թագուհուն հաջողվեց ստեղծել Եվրոպայի ամենաբարդ հետախուզական գործակալությունը: Ամբողջ Իսպանիայում գաղտնի գործակալներ ունենալով՝ Եղիսաբեթը կատարելապես տեղեկացված էր Ֆիլիպի յուրաքանչյուր քայլի մասին: Թագուհին ճշգրիտ գիտեր, թե քանի նավ կար նրա նավատորմիղում և երբ էր նախատեսվում ավարտել աշխատանքը: Սա Եղիսաբեթին թույլ տվեց հետաձգել զորահավաքը մինչև վերջին պահը՝ խնայելով պետության փողերը:

Վերջապես, 1588 թվականի ամռանը, իսպանական նավատորմիղը պատրաստ էր: Այն բաղկացած էր 128 նավից, այդ թվում՝ 20 մեծ գալեոնից[1], ուներ 8000 նավաստիներից և 19.000 հետևակայիններից բաղկացած անձնակազմ: Նավատորմիղը Ֆիլիպին արժեցավ մի ամբողջ կարողություն, և նավերի քանակով այն հավասար էր ամբողջ անգլիական նավատորմին: Հուլիսի երկրորդ շաբաթում իսպանական նավատորմիղը Լիսաբոնից դուրս եկավ ծով: Եղիսաբեթը լիովին տեղեկացված էր կատարվածի մասին, նրա լրտեսները պարբերաբար զեկուցում էին իսպանացի թագավորի բոլոր ծրագրերի մասին: Հետևաբար, թագուհուն հաջողվեց անգլիական նավատորմը ժամանակին մոտեցնել նավատորմիղին: Փոքրաքանակ, բայց ավելի մանևրային անգլիական նավերը հարձակվեցին նավատորմիղի վրա Ֆրանսիայի ափեր տանող ճանապարհին՝ մեկը մյուսի հետևից ջրասույզ անելով մատակարարող նավերը՝ սերմանեցին քաոս և խառնաշփոթ: Անգլիական նավատորմի հրամանատար, Էֆինգհեմի լորդ Հովարդի զեկույցում ասվում էր. «Նրանց նավատորմը հսկայական և ուժեղ է, բայց մենք աստիճանաբար պոկում ենք նրանց փետուրները»:

Վերջապես, նավատորմիղը խարիսխ ձգեց Կալե նավահանգստում, որտեղ նրանց պետք է միանար Նիդեռլանդներում կռվող իսպանական ուժերը: Անգլիացիները, վճռական լինելով դա թույլ չտալու համար, սարքավորեցին ութ մեծ նավ, բեռնելով դրանք դյուրավառ նյութերով և ուղղեցին դեպի իսպանական նավատորմիղը, որոնք խիտ շարքերով էին խարսխված: Հրկիզելով իսպանացիների նավերը անգլիացիները արագորեն հեռացան դեպքի վայրից: Արդյունքում խուճապ առաջացավ, տասնյակ իսպանական նավեր այրվեցին: Մնացածները շուտափույթ սկսեցին

---

[1] **Գալեոն** (galeon)-16-18-րդ դարերի մեծ բազմատախտակամած առագաստանավ՝ բավականին ուժեղ հրետանային սպառազինությամբ, որն օգտագործվում էր որպես ռազմական և առևտրային նավ : https://ru.wikipedia.org/wiki/%D0%93%D0%B0%D0%BB%D0%B5%D0%BE%D0%BD

հեռանալ անվտանգ վայր, ժամանակ առ ժամանակ բախվելով միմյանց: Ոչ ոք չէր լսում հրամանները, և շուրջբոլորը անկարգություն էր տիրում:

Կալեում նավերի կորուստը այնքան էր թուլացրել իսպանական ուժերի մարտական ոգին, որ ներխուժումը ստիպված եղավ չեղարկել: Իսպանիա վերադառնալու ճանապարհին կրկնվող հարձակումներից խուսափելու համար մնացած նավերը հարավի փոխարեն նախընտրեցին հյուսիսային ուղղությունը, շրջանցելով Շոտլանդիան և Իռլանդիան: Անգլիացիները նույնիսկ չանհանգստացան նրանց հետապնդելու համար: Նրանք համոզված էին, որ այդ ջրերում սարսափելի եղանակը կլուծեր իրենց խնդիրները: Եվ փոթորիկը իսկապես ավարտեց աշխատանքը: Երբ նավատորմիղի մնացորդները հասան Իսպանիա, քառասունչորս նավ կորել էր, իսկ մնացածը լուրջ վնասներ էին կրել: Նավաստիների և զինվորների գրեթե երկու երրորդը զոհվել էր ծովում: Մինչդեռ Անգլիան գրեթե անվնաս էր մնացել, մարտերում զոհվել էին հարյուրից պակաս մարդ:

Սա հաղթանակ էր, բայց Եղիսաբեթը դափնիների վրա չհանգչեց: Գումարը խնայելու համար նա անմիջապես լուծարեց նավատորմը: Թագուհին անտեսեց խորհրդականների այն խորհուրդները, ըստ որոնց նրանք հորդորում էին ամրապնդել հաջողությունը և հարձակվել իսպանացիների վրա Նիդեռլանդներում: Եղիսաբեթի նպատակները կոնկրետ և սահմանափակ էին՝ վատնել Ֆիլիպի ռեսուրսներն ու գումարը, ստիպել նրան մոռանալ կաթոլիկ գերիշխանության մասին և Եվրոպայում հասնել ուժերի հավասարակշռության: Եվ սա իսկապես թագուհու ամենամեծ հաղթանակն էր, քանի որ Իսպանիան երբեք լիովին չվերականգնվեց նավատորմիղի ֆինանսական կործանումից հետո և շուտով Եվրոպայում գերիշխանությունը զիջեց հօգուտ Անգլիայի:

Մեկնաբանում

Իսպանական նավատորմիղի պարտությունը, թերևս, պետք է համարել ռազմական պատմության մեջ ամենաարդյունավետներից մեկը: Երկրորդ կարգի գահը, մի երկիր, որը հազիվ թե կարողանար արժանի բանակ հավաքել, կարողացավ հաջողությամբ դիմակայել իր ժամանակի ամենամեծ կայսրությանը:

Այս հաղթանակը հնարավոր դարձավ ռազմական գիտության հիմնարար աքսիոմի կիրառման շնորհիվ. հարձակվեք թշնամու թույլ կողմերի վրա՝ օգտագործելով ձեր ուժը: Այդ դարաշրջանի Անգլիայի ուժեղ կողմերն էին նրա փոքր շարժուն նավատորմը և հետախուզական լայնածավալ համակարգը: Նրա թուլությունը սահմանափակ ռեսուրսների մեջ էր՝ լինի դա մարդ, զենք, թե փող: Իսպանիայի հզորությունը հարստության, ինչպես նաև հսկայական բանակի և նավատորմի մեջ էր: Կայսրության թույլ կողմը՝ անկայուն և անվստահելի ֆինանսական կառուցվածքն էր, ինչպես նաև այն, որ իսպանական նավատորմիղի նավերը չափազանց մեծ էին և դանդաղաշարժ: Եղիսաբեթը հրաժարվեց պատերազմ վարել, որը իսպանացիները կցանկանային պարտադրել: Փոխարենը, նա, զերծ մնալով ռազմական բախումներից, հարձակվեց թշնամու թույլ կողմերի վրա՝ իր շարժուն նավերով զայրացնելով իսպանական անշնորհք գալեոններին, խարխլելով Իսպանիայի ֆինանսական կառուցվածքը և կոտրելով նրա ռազմական մեքենան՝ ընդհուպ մինչև ամբողջական կանգառ: Եղիսաբեթը կարողացավ վերահսկել իրավիճակը՝ նվազեցնելով Անգլիայի ծախսերը և միևնույն ժամանակ ստիպելով Իսպանիային ավելի շատ ծախսել՝ պատերազմն ավելի ու ավելի թանկ դարձնելով հզոր հակառակորդի համար: Վերջապես եկավ այն պահը, երբ Ֆիլիպի պարտու-

թյունը անխուսափելի դարձավ՝ անկախ իրադարձությունների հետագա ընթացքից: Այն դեպքում, երբ նավատորմիղը խորտակվեր, դա կնշանակեր փլուզում Իսպանիայի թագավորի համար, և հարվածից վերականգնվելու համար նրան տարիներ կպահանջվեր: Բայց նույնիսկ այն դեպքում, եթե նավատորմիղը հաղթանակ տաներ, այդ հաղթանակը շատ թանկ կլիներ, և Ֆիլիպը կկործանվեր՝ փորձելով հենակետ ձեռք բերել անգլիական հողերում:

Կարևոր է, որ դուք հասկանաք, որ ոչ մի անձ կամ խումբ բնույթով ուժեղ կամ թույլ չէ: Յուրաքանչյուր բանակ, անկախ նրանից, թե որքան անպարտելի է թվում, կունենա թուլություն, ինչ-որ տեղ, որը մնում է չբացահայտված կամ անպաշտպան: Միևնույն ժամանակ, նույնիսկ ամենաթույլ ստորաբաժանումը կունենա ինչ-որ բանի վրա հույս դնելու, ինչ-որ ուժեղ կողմ, ինչ-որ թաքնված առավելություն: Պատերազ-մում ձեր նպատակը պարզապես սպառազինություն կուտակելը չէ, և ոչ էլ պարզա-պես ձեր կրակային հզորությունը մեծացնելը, մինչև թշնամուն երկրի երեսից ջնջելը: Սա պահանջում է չափազանց շատ ջանքեր և ռեսուրսներ, և դա չի օգնի ձեզ պաշտպանվել պարտիզանական ոճի հարձակումներից: Նետվելով թշնամու վրա, ներգրավվելով մարտ առ մարտ,կամ միայն ուժին ուժով պատասխանելը, նույնպես կառուցողական չէ: Դրա փոխարեն, նախ գնահատեք թշնամու թույլ կողմերը. օրինակ՝ ներքին քաղաքական խնդիրները, ցածր մարտական ոգին, անկայուն տնտեսությունը, չափազանց կենտրոնացված կառավարությունը կամ մեծամտության մոլուցքով առաջնորդին: Միևնույն ժամանակ, փորձեք թաքցնել ձեր սեփական թուլությունները հետաքրքրասեր աչքերից և պատրաստվեք երկարատև մարտի, կուտակելով ձեր ուժերը և բազմիցս հարվածեք թշնամու աքիլեսյան գարշապարին: Բացահայտելով թույլ կողմերը և ճշգրիտ հարվածելով՝ դուք կտանջեք թշնամուն, կհիասթափեցնեք նրա բանակը, և դա կհանգեցնի նոր թույլ կետերի ի հայտ գալուն: Ուժեղ և թույլ կողմերի ուշադիր գնահատումը կօգնի ձեզ հաղթել Գողիաթին [2] սովորական պարսատիկով:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐ

Իրականությունը կարելի է սահմանել որպես ցանկացած կենդանի էակին առաջադրված խիստ սահմանափակումների ամբողջություն, որոնց գերազանցումը կարող է հանգեցնել մահվան: Մենք ունենք միայն սահմանափակ էներգիայի պաշար: Երբ այն սպառվում է, հոգնածություն է առաջանում: Մեզ համար հասանելի սննդի և այլ ռեսուրսների առումով մեր հնարավորությունները նույնպես անսահման չեն: Մեր կարողություններն ու հմտությունները զարգանում են միայն որոշակի չափով: Կենդանին գոյություն ունի խստորեն տրված սահմանափակումների սահմաններում:

---

[2] **Գողիաթ:** Փղշտացիները հարձակվում էին իսրայելացիների վրա: Ամեն առավոտ Գողիաթ անունով փղշտացի մի հսկա մարտահրավեր էր նետում որևէ իսրայելացու: Գողիաթը շատ ավելի մեծ ու բարձրահասակ էր, քան որևէ իսրայելացի և շատ դաժան էր: Ոչ ոք չէր համարձակվում մենամարտել նրա հետ:…Երիտասարդ հովիվ Դավիթը հինգ հարթ քար ընտրեց և դրեց պարկի մեջ: Նա վերցրեց իր պարսատիկն ու գնաց Գողիաթի հետ մենամարտելու: Դավիթին տեսնելով՝ Գողիաթը բղավեց ու սկսեց ծաղրել նրան: Նա ասաց, որ հովիվ տղան չի կարող հաղթել իրեն: Դավիթն ասաց, որ ինքը ապավինում է Տիրոջը: Դավիթը վազեց դեպի Գողիաթը: Նա արագ մի քար նետեց իր պարսատիկով: Քարը դիպավ Գողիաթի ճակատին և հսկան գետին տապալվեց: … Դավիթը հաղթեց Գողիաթին առանց թրի և զրահի: Տեսնելով, որ Գողիաթը մեռած է, փղշտացիները փախան: Իսրայելացիները հաղթեցին:
https://www.churchofjesuschrist.org/study/manual/old-testament-stories-2022/david-and-goliath?lang=hye

Կենդանին չի կարող ավելի բարձր թռչել կամ ավելի արագ վազել, չի կարող անընդհատ էներգիա ծախսել՝ կուտակելով սննդի լեռներ, քանի որ դա կսպառի նրան և կդարձնի խոցելի հարձակման համար: Կենդանին, պարզապես ապրում է տրված պայմաններում՝ փորձելով որքան հնարավոր է շատ արդյունահանել՝ առանց անցնելու հասանելի սահմաններից այն կողմ: Օրինակ՝ կատվի նրբագեղ շարժումները չափազանց խնայողական են, քանի որ կատուն, առաջնորդվելով բնազդներով, ապարդյուն էներգիա չի վատնում և չի գործադրում ավելորդ, անարդյունք ջանքեր: Աղքատության մեջ ապրող մարդիկ նույնպես լավ գիտակցում են իրենց հնարավորությունները: Ստիպված լինելով ապրել իրենց ունեցած միջոցների սահմաններում, նրանք դառնում են չափազանց հնարամիտ: Անհրաժեշտությունը գործոն է, որը հզոր ազդեցություն ունի նրանց ստեղծագործական ներուժի վրա:

Այսպես կոչված բարեկեցիկ հասարակությունում ապրող մարդկանց խնդիրն այն է, որ նրանք կորցնում են բնական չափի զգացումը: Մենք այնքան զգուշորեն պաշտպանված ենք մահից, որ երբեմն ամիսներ և նույնիսկ տարիներ են անցնում առանց դրա մասին մտածելու: Մենք պատկերացնում ենք, որ կյանքն անվերջ է, որ ունենք այնքան ժամանակ, որքան ցանկանում ենք, և արդյունքում աստիճանաբար հեռանում ենք իրականությունից, երբեմն՝ շատ հեռու: Մենք կարծում ենք, որ կարող ենք ծախսել այնքան էներգիա, որքան ցանկանում ենք, կարծում ենք, որ կարող ենք հասնել ամեն ինչի, ինչ ուզում ենք, պարզապես պետք է բավականաչափ ջանք թափենք: Մեր շուրջը ամեն ինչ սկսում է անսահման թվալ, անսահմանափակ՝ ուրիշների բարյացակամությունը, հարստության հնարավորությունները, փառքը: Մենք նետվում ենք այս ու այն կողմ՝ հույս ունենալով, որ մի քանի դասընթացների, մի քանի դասագրքերի միջոցով կկարողանանք զարգացնել մեր տաղանդներն ու հմտությունները այնպիսի աստիճանի, որն իրականում անհնար է մարդկանց, կամ գոնե մեկ մարդու համար: Մեզ թվում է, որ տեխնոլոգիան կարող է ամեն ինչ դարձնել մատչելի և հասանելի:

Առատությունը մեզ երազողներ է դարձնում, քանի որ ֆանտազիայում սահմաններ և սահմանափակումներ չկան: Ինչպես ասում են՝ մենք հարուստ ենք մտքերով: Բայց երազկոտությունը իրականում մեզ աղքատացնում է: Այն մեզ ծույլ ու դանդաղաշարժ է դարձնում, մենք կշտանում ենք նրանով, ինչ ունենք, և մեզ անհրաժեշտ են անընդհատ թափահարումներ ու ցնցումներ, որոնք կհիշեցնեն մեզ, որ դեռ կենդանի ենք: Կյանքում մենք պետք է զինվորներ լինենք, իսկ պատերազմը պահանջում է իրերի սթափ և իրատեսական գնահատում: Մինչ մյուսները գեղեցկություն են փնտրում անպտուղ երազներում, զինվորները այն փնտրում են իրականում՝ հնարավորությունների և սահմանափակումների ճշգրիտ գնահատման մեջ, իրենց իրականում ունեցածից առավելագույնը քաղելու մեջ: Ինչպես կատուն, նրանք ձգտում են կատարելության հասնել խնայողական շարժումներում և ժլատ ժեստերում՝ փորձելով յուրաքանչյուր հարվածը դարձնել հնարավորինս հզոր՝ էներգիայի նվազագույն ծախսով: Զինվորը գիտակցում է այն փաստը, որ իր օրերը հաշված են, որ նա կարող է զոհվել ցանկացած օր, և դա նրան պահում է իրականության մեջ: Կան բաներ, որոնք նրանք՝ զինվորները, երբեք չեն կարողանա անել, տաղանդներ, որոնք երբեք չեն զարգացնի, արժանի նպատակներ, որոնք երբեք չեն հասնի, բայց սա նրանց չի անհանգստացնում: Զինվորները կենտրոնանում են իրենց տրվածի, իրենց ունեցած ուժի վրա և պետք է ստեղծագործաբար օգտագործեն այն: Ճշգրիտ իմանալով, թե երբ դանդաղեցնել, նահանջել և թաքնվել խրամատներում,

նրանք մաններում են: Նրանք գիտեն, թե ինչպես ժամանակն իրենց օգտին աշխատեցնել:

Ֆրանսիական գաղութային տիրապետության վերջին տարիներին և ավելի ուշ՝ ԱՄՆ-ի կողմից Վիետնամ ներխուժման ժամանակ, ազգային դիմադրության առաջնորդներից մեկն էր գեներալ Վո Նգույեն Դիապը: Ե՛վ ֆրանսիացիները, և՛ ամերիկացիները շատ ավելի հզոր նյութական ռեսուրսներ, սպառազինություն և ռազմամասնագիտական պատրաստվածություն ունեին: Դիապի բանակը, ըստ էության, բաղկացած էր սովորական գյուղացիներից, որոնք քիչ բան էին հասկանում ռազմական գործերից: Այո՛, վիետնամցիները բարձր մարտական ոգի ունեին, նրանք նպատակասլացություն ունեին և մեծ ցանկություն՝ երկիրը զավթիչներից ազատելու, բայց դրանից բացի, նրանք գրեթե ոչինչ չունեին: Զենք և սնունդ մատակարարելու համար բեռնատար տրանսպորտ չկար, իսկ կապի տեխնոլոգիաները մնում էին 19-րդ դարի մակարդակին: Մեկ այլ հրամանատար կարող էր փորձել փոխհատուցել այս ամենը, բայց Դիապը այլ կերպ վարվեց: Երբ նա Չինաստանից առաջարկ ստացավ իր բանակին բեռնատարներ, ռադիոհաղորդիչներ, զենք և մասնագետներ մատակարարելու համար, նա դա ընկալեց որպես ծուղակ: Նա կտրականապես հրաժարվեց սահմանափակ միջոցները ծախսել արտաքին օգնության վրա: Նրա կարծիքով, դա ոչ մի լավ բանի չէր կարող հանգեցնել, այլ միայն հյուսիսվիետնամցիներին կվերածեր թշնամու ավելի վատ և թույլ պատճենի: Դրա փոխարեն նա որոշեց առավելագույնս օգտագործել իր բանակի իրական ունեցածը՝ փորձելով դրա ակնհայտ թերությունները վերածել առավելությունների:

Բեռնատարները հեշտությամբ կարելի էր տեսնել օդից, և կասկած չկար, որ ամերիկացիներն անմիջապես ռմբակոծելու են վիետնամական մեքենաների ցանկացած շարասյուն: Բայց ամերիկացիներն ի զորու չէին ռմբակոծել այն, ինչ չէին տեսնում: Ուստի Դիապը օգտագործեց այն ռեսուրսները, որոնք ձեռքի տակ էին:

Անհրաժեշտ բեռները տեղափոխելու համար կիրառվեց կուլի-գյուղացիների ճյուղավորված ցանցը, ովքեր բեռները կրում էին մեջքին: Եթե նրանց անհրաժեշտ էր անցնել գետը, նրանք օգտագործում էին ճոպանե կամուրջները, որոնք ձգվում էին ոչ թե ջրի վրայով, այլ անմիջապես դրա մակերեսից մի փոքր խորությաբ: Մինչև պատերազմի ավարտը ամերիկացիները այդպես էլ չկարողան հասկանալ, թե ինչպես էր խուսանավող Հյուսիսային վիետնամցիներին հաջողվում մատակարարել իրենց դաշտային ջոկատները անհրաժեշտ ամեն ինչով:

Մինչդեռ, Դիապը, չբավարարվելով ձեռքբերվածով, կատարելագործեց կայծակնային պարտիզանական պատերազմ վարելու հնարքները՝ հնարք, որը նրա բանակին անգնահատելի առավելություն տվեց, թույլ տալով ոչնչացնել թշնամու տրանսպորտային ուղիներն ու հաղորդակցությունները: Մարտական գործողությունների, զորքերի տեղափոխման և բոլոր տեսակի բեռների մատակարարման համար ամերիկյան բանակն օգտագործում էր ուղղաթիռներ, և դա, իհարկե, այն դարձնում էր աներևակայելի շարժունակ: Բայց, անկախ նրանից, թե ինչպես եք նայում դրան, դուք պետք է կռվեք հիմնականում ցամաքում, և Դիապը ցուցաբերեց հնարամտության հրաշքներ՝ օգտագործելով անթափանց ջունգլիները՝ ԱՄՆ ռազմաօդային ուժերին չեզոքացնելու, ամերիկյան հետևակին ապակողմնորոշելու և սեփական զորքերը քողարկելու համար: Նա չէր կարող հույսը դնել ամերիկյան նորագույն զենքի և ռազմական տեխնիկայի դեմ բաց մարտում հաղթանակի

վրա, ուստի նա իր բոլոր ջանքերը ներդնում էր տպավորիչ, խորհրդանշական, հուսահատեցնող հոգեբանական հարձակումների մեջ՝ ամերիկացիների հոգում քիչ-քիչ սերմանելով այս պատերազմի անհույսության և անօգուտության զգացում: Եվ նա հասավ իր նպատակին, քանի որ Վիետնամի պատերազմի այս ընկալումն էր, որը շուտով գերիշխեց ամերիկյան հեռուստատեսությունում: Իր տրամադրության տակ եղած նվազագույն ռեսուրսներով Դիապին հաջողվեց հասնել առավելագույն հաջողության:

Դժբախտաբար, փողի, զենքի և այլ ռեսուրսների վրա հույսը դնող բանակները բավականին կանխատեսելի են: Ամբողջությամբ նյութական ռեսուրսներին հույսը դնելով՝ ռազմավարության և գիտելիքների վրա կենտրոնանալու փոխարեն, նրանք կարող են մտավոր ծույլ դառնալ: Եթե այդպիսի բանակի առջև խնդիր է ծառանում, ապա պարզ որոշում է կայացվում՝ ավելացնել և կուտակել այն ամենը ինչ արդեն լիառատ է: Բայց այսպիսի լուծումները հաղթանակի չեն հանգեցնում, քանի որ կարևորը ոչ թե նյութական ռեսուրսների քանակն է, այլ այն, թե արդյոք կարող եք իմաստուն կերպով օգտագործել եղածը: Եթե քիչ ունեք, ստիպված եք ավելի հնարամիտ լինել: Ստեղծագործականությունը ձեզ առավելություն է տալիս տեխնոլոգիայի վրա հույսը դնող թշնամու նկատմամբ: Դուք կսովորեք, ավելի հեշտությամբ հարմարվել իրավիճակին և, իհարկե, կխաբեք նրան: Սահմանափակ ռեսուրսները չեն կարող վատնվել, և դա իմանալով՝ դուք դրանք իմաստուն և ստեղծագործաբար կծախսեք: Ժամանակը կլինի ձեր դաշնակիցը:

Եթե դուք ունեք ավելի քիչ ռեսուրսներ, քան ձեր հակառակորդը, մի՛ հուսահատվեք: Դուք միշտ կարող եք իրավիճակը փոխել ձեր օգտին՝ գործելով ողջամիտ խնայողության ռեժիմով: Եթե դուք և ձեր թշնամին ունեք մոտավորապես հավասար ռեսուրսներ, մի՛ ձգտեք ավելացնել ձեր սպառազինվածությունը: Շատ ավելի կարևոր է փորձել ավելի նպատակային օգտագործել ձեր ունեցածը: Եթե դուք ունեք ավելին, քան ձեր հակառակորդը, խնայող լինելն ավելի կարևոր է, քան նախորդ դեպքերում: Ինչպես Պաբլո Պիկասոն էր ասում. «Նույնիսկ եթե հարուստ եք, վարվեք աղքատի պես»: Աղքատները ավելի հնարամիտ են և հաճախ ավելի շատ են զվարճանում, քանի որ գնահատում են այն, ինչ ունեն և գիտեն իրենց հնարավորությունների սահմանները: Ռազմավարության մեջ դուք երբեմն ստիպված եք ստիպել ինքներդ ձեզ մոռանալ ձեր ներուժի մասին և փորձել հնարավորինս շատ քամել նվազագույնից: Նույնիսկ եթե ունեք ամենաժամանակակից տեխնոլոգիաները, մղեք գյուղացիական պատերազմ:

Ասվածը ամենևին չի նշանակում, որ անհրաժեշտ է զինաթափվել կամ պարտվել՝ հասկանալու համար, թե նյութական բազան ինչ առավելություններ կարող է տալ ձեզ: 1991 թվականին Իրաքում «Փոթորիկ անապատում» գործողությունն իրականացնելիս ամերիկացի ռազմական ստրատեգները լիովին օգտագործեցին բոլոր տեխնոլոգիական հնարավորությունները, հատկապես օդում, բայց դա չէր, որ վճռորոշ էր հաղթանակի համար: Դրանից քսան տարի առաջ Վիետնամում ամերիկացի զինվորականների ստացած դասը իզուր չէր կորել, այժմ նրանց գործողություններում առկա էին ինչպես խաբուսիկ մանևրներ, այնպես էլ շարժունակություն, որոնք սովորաբար բնորոշ են պարտիզանական տիպի պատերազմ վարող փոքր ջոկատներին:

Պատերազմը նպատակների և միջոցների միջև հավասարակշռության որոնումն է: Հրամանատարը կարող է մշակել լավագույն պլանը որոշակի նպատակին հասնելու համար, բայց ծրագիրն ինքնին ոչինչ չի արժենա, եթե կատարման միջոցներ չկան:

Իմաստուն հրամանատարներ բոլոր ժամանակներում հասկացել և հասկանում են, որ պետք է սկսել առկա միջոցների գնահատումից և հետո արդեն ռազմավարություն մշակել՝ հաշվի առնելով այն, ինչ կա իր տրամադրության տակ: Հենց այս մոտեցման շնորհիվ էր, որ Հանիբալը դարձավ այդպիսի փայլուն ստրատեգ: Նա միշտ նախ ուշադիր ուսումնասիրում էր նախնական տվյալները և այնուհետև մտածում: Նա ուսումնասիրում էր սեփական բանակի և թշնամու բանակի կառուցվածքը, հեծելազորի և հետևակի հարաբերակցությունը, տարածքը, զորքերի մարտական ոգին, եղանակը: Սա նրան հնարավորություն տալիս ոչ միայն պլանավորել հարձակումը, այլև հստակ տեսնել այն նպատակները, որոնք նախատեսվում էր հասնել այս ճակատամարտի արդյունքում: Փոխանակ սահմանափակվելու միայն կռվելու մասին մտածելով, ինչպես մեծամասնության զորավարները, նա երբեք չէր կորցնում միջոցների և նպատակների միջև համապատասխանությունը: Սա այն ռազմավարական առավելությունն էր, որը նա օգտագործում էր ամեն անգամ:

Հաջորդ անգամ, երբ սկսեք ռազմարշավ, փորձարկեք մի բան: Մի մտածեք ձեր վերջնական նպատակների, այն մասին, թե ինչի եք ուզում հասնել ամբողջ սրտով, և մի՛ պլանավորեք ձեր ռազմավարությունը թղթի վրա: Դրա փոխարեն, ուշադիր մտածեք այն մասին, թե ինչ ունեք ձեր տրամադրության տակ՝ գործիքների և նյութերի, որոնք կարող եք օգտագործել: Ստիպեք ինքներդ ձեզ իրականության համապատասխան մտածել, այլ ոչ թե երազել և պլանավորել, մտածեք այն մասին, թե ինչ կարող եք անել, քաղաքական առավելությունների դեպքում, որոնց վրա կարող եք հույս դնել, ձեր զորքերի մարտական ոգու և այն մասին, թե որքան ստեղծագործաբար և հնարամտորեն կարող եք օգտագործել ձեր տրամադրության տակ եղած ամեն ինչը: Այնուհետև, այդտեղից սկսեք մշակել ձեր նպատակները:

Այս մոտեցմամբ ձեր ցանկացած ռազմավարական ծրագիր կդառնա ոչ միայն ավելի իրատեսական, այլև ավելի հնարամիտ և ուժեղ: Երազելով, սկսել այն մասին, թե ինչ կցանկանայիք, իսկ հետո միջոցներ փնտրել այդ երազանքներն իրականացնելու համար՝ բաղադրատոմս է նրանց համար, ովքեր փափագում են ուժի լիակատար սպառում, կործանում և ձախողում:

Պետք չէ շփոթել ժլատությունը ճշգրտության և խելամիտ խնայողության հետ: Բանակները ձախողվել են նաև չափազանց քիչ ծախսելով նույնքան հաճախ, որքան չափազանց շատ ծախսելով: Երբ Մեծ Բրիտանիան Առաջին համաշխարհային պատերազմում հարձակվեց Թուրքիայի վրա՝ հույս ունենալով դուրս մղել նրան պատերազմից, ապա արևելքից հարձակվել Գերմանիայի վրա, սկսեց նավատորմ ուղարկելով՝ Դարդանելի նեղուցը ճեղքելու և Թուրքիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիս ուղղություն վերցնելու համար: Նավատորմը լավ առաջընթաց գրանցեց, բայց մի քանի շաբաթ անց որոշ նավեր խորտակվեցին, զոհերը սպասվածից ավելի շատ էին, և պարզ դարձավ, որ ամբողջ ձեռնարկը սպասվածից ավելի թանկ էր: Այնուհետև բրիտանական հրամանատարությունը դադարեցրեց նավատորմի գործողությունները՝ որոշելով փոխարենը ցամաքային դեսանտ իջեցնել Գալիպոլի թերակղզում: Սա թվում էր ավելի էժան և անվտանգ, բայց պարզվեց, որ դա լիակատար ֆիասկո է: Նախաձեռնությունը տևեց ամիսներ և հազարավոր կյանքեր խլեց, բայց արդյունք չտվեց, քանի որ դաշնակից ուժերը հրաժարվեցին շարունակել մասնակցել օպերացիային և դուրս բերեցին իրենց զորքերը: Տարիներ անց, երբ թուրքական ռազմական արխիվները հրապարակվեցին, պարզ դարձավ, որ բրիտանական նավատորմը ընդամենը մեկ քայլ էր հեռու հաղթանակից: Բառացիորեն ևս մեկ կամ երկու օր, և ճեղքումը տեղի կունենար, և այդ ժամանակ, ամենայն

հավանականությամբ, Կոստանդնուպոլիսը կգրավվեր առանց դժվարության: Սա կարող էր փոխել համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքը: Սակայն բրիտանացիները չափազանցեցին խնայողությունը: Վերջին պահին նրանք հետ քաշեցին նավատորմը՝ խուսափելով հարվածից, որը կարող էր հաղթական լինել: Նրանք միայն մտահոգված էին արժեքով: Ի վերջո, էժան հաղթանակի փորձի գինը պարզվեց, որ ավելի բարձր է:

Խելամիտ խնայողությունը, ի տարբերություն նման ժլատության, չի նշանակում, որ ձեզ առաջարկում են պաշարներ կուտակել՝ առանց դրանք օգտագործելու: Սա այլևս խնայողություն չէր լինի, այլ կծծիություն: Այս որակը մահացու վտանգավոր է պատերազմում: Խելամիտ խնայողությունը ենթադրում է ճշգրիտ հաշվարկի, ոսկե միջինի այն մակարդակը, որին կարող եք հասնել ծախսերի առումով՝ առանց ձեր ռեսուրսները սպառելու: Ի դեպ, թե՛ ժլատությունը, թե՛ չափազանց խնայողությունը շատ ավելի ուժասպառ են: Եթե պատերազմը անվերջ ձգձգվում է, դրա արժեքը անընդհատ աճում է, և դուք նույնիսկ հնարավորություն չունեք վճռական հարված հասցնելու՝ թշնամուն նոկաուտի ենթարկելով:

Շատ մարտավարություններ իդեալական են տնտեսող պատերազմների համար: Դրանցից առաջինը ռազմական խորամանկությունն է, ապատեղեկատվությունը: Այն էժան է, բայց կարող է տպավորիչ արդյունքների հասնել: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ դաշնակիցները հաճախ դիմում էին ապատեղեկատվության: Գերմանացիներին ստիպում էին սպասել միաժամանակյա հարձակումների տարբեր ուղղություններից, ուստի ստիպված էին բաժանել իրենց ուժերը՝ ցրելով դրանք տարբեր ճակատներում: Ռուսաստանում ռազմական գործողություններ իրականացնելիս Հիտլերը ստիպված էր դիվիզիաներ պահել Ֆրանսիայում և Բալկաններում՝ սպասելով հարձակումների, որոնք երբեք տեղի չեն ունեցել: Խորամանկությունը կարող է հավասարակշռել ուժերը: Դա իսկական արվեստ է, որը բաղկացած է տեղեկատվություն հավաքելուց, ապատեղեկատվություն տարածելուց և քարոզչության լայնածավալ օգտագործումից, որը քայքայում է թշնամու մարտական ոգին՝ ստիպելով նրան բացասական վերաբերմունք ունենալ պատերազմի նկատմամբ:

Երկրորդ: Փնտրեք հակառակորդներ, որոնց կառող եք հաղթել: Խուսափեք թշնամիներից, ովքեր կորցնելու ոչինչ չունեն: Նրանք կձգտեն հաղթել ձեզ, անկախ նրանից, թե ինչ արժե այն:

19-րդ դարում Օտտո ֆոն Բիսմարկը ստեղծեց պրուսական ռազմական ուժը՝ օգտագործելով ավելի թույլ հակառակորդներին, ինչպիսիք են դանիացիները: Հեշտ հաղթանակը կնպաստի զորքերում բարոյական ոգու բարելավմանը, կամրապնդի ձեր հեղինակությունը, ձեզ ուժ կտա և, ամենակարևորը, շատ թանկ չի արժենա:

Լինում են ժամանակներ, երբ հաշվարկները սխալ են: Այն, ինչը թվում էր, թե հեշտ հաղթանակ է լինելու, երբեմն վերածվում է ամենադժվար ճակատամարտի: Ամեն ինչ չէ, որ կարելի է կանխատեսել: Հետևաբար, կարևոր է ոչ միայն ուշադիր մտածել ապագա ճակատամարտի մասին, այլև կարողանալ որոշել այն պահը, երբ է անհրաժեշտ ընդունել պարտությունը և հեռանալ:

Եվ վերջինը՝ ոչինչ հարատև չէ, ամեն ինչ փոխվում է : Ժամանակի ընթացքում կամ ձեր ջանքերը կթուլանան, աստիճանաբար կսկսեն մարել (լինի դա արտաքին անկանխատեսելի հանգամանքների պատճառով, թե ձեր սեփական գործողությունների պատճառով), կամ, ընդհակառակը, ինչ-որ հրում, թափ կօգնի առաջ շարժվել: Անխոհեմորեն ծախսելով այն, ինչ ունեք, դուք կնպաստեք գործընթացի թուլացմանը,

մարտական ոգու և էներգիայի նվազմանը: Այսպիսով, դուք, անշուշտ, կարգելակեք ձեր սեփական շարժումը:

Մյուս կողմից, մտածված և հաշվարկված գործողությունները կօգնեն թափ հավաքել: Դիտեք դա որպես ձեր սեփական մակարդակի որոնում: Դուք պետք է գտնեք հավասարակշռություն, բալանս այն բանի միջև, ինչ կարող եք անել, և այն բանի միջև, ինչ պետք է անել:

Եթե ձեր կատարած աշխատանքը ո՛չ չափազանց հեշտ է, ո՛չ էլ չափազանց դժվար, այլ ձեր հնարավորությունների սահմաններում է, այն ձեզ չի հյուծի կամ չի ձանձրացնի ու չի ընկճի: Դուք հանկարծ կզգաք թարմ էներգիայի և ստեղծագործական ուժի ալիք: Պատերազմ մղելը խելամիտ խնայողության սկզբունքով նույնն է, ինչ ընկնել ճիշտ ձեր մակարդակի վրա և, հետևաբար, ավելի քիչ դիմադրություն հաղթահարելով՝ ավելի շատ էներգիա ազատել: Անշուշտ, իմանալով և սթափ գնահատելով ձեր ներուժը, դուք հնարավորություն եք ստանում ընդլայնել և մեծացնել այն: Ձեր ունեցածից առավելագույնը քաղելով՝ դուք ստանում եք ավելին, քան ունեցել եք:

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Վատնողական պայքարում երբեք առավելություն չի կարող լինել, սակայն միշտ իմաստ ունի փորձել ստիպել հակառակորդին որքան հնարավոր է շատ ծախսել իր ռեսուրսները: Դրան կարելի է հասնել կետային հարվածների մարտավարությամբ, հանկարծակի արագ հարձակումներով, ինչը կստիպի նրան մսխել իր ուժերը հետապնդելով ձեզ: Ներշնչեք նրան այն համոզմունքով, որ մեկ խոշոր հարձակողական օպերացիան բավական է ձեզ խոցելու համար: Եվ հետո ստիպեք նրան խրվել այդ օպերացիայի մեջ՝ այն վերածելով երկարատև պատերազմի, որտեղ նա կկորցնի ժամանակ, ուժ և ռեսուրսներ:

Շփոթված հակառակորդը, որը ստիպված է ուժերը ծախսել նպատակակետին չհասած հարվածների վրա, շուտով կսկսի սխալվել և կբացահայտվի՝ իրեն դնելով ձեր հզոր հակահարվածի տակ:

Սկիզբը.

1) https://www.datocms-assets.com/63284/1732378406-first-strategy_arm.pdf
2) https://www.datocms-assets.com/63284/1735414231-last-wars_arm.pdf
3) https://www.datocms-assets.com/63284/1740855330-keep-ur-head_arm.pdf
4) https://www.datocms-assets.com/63284/1744480072-drive-into-desperate_arm.pdf
5) https://www.datocms-assets.com/63284/1747510579-avoid-traps_arm.pdf
6) https://www.datocms-assets.com/63284/1751140077-divide-forces_arm.pdf
7) https://www.datocms-assets.com/63284/1754762031-crusade-war_arm.pdf

Աղբյուրը. https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chi